# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՐԳԻՏԱՆԱՀԱՆԳԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ցանկանալով նպաստել կողմերի միջեւ երկկողմ համագործակցության, հարաբերությունների եւ բարեկամության զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման ոլորտներում երկկողմ համագործակցության նոր ֆորմատով զարգացմանը, հիմնված փոխադարձ հարգանքի եւ ընդհանուր շահերի և խնդիրների լուծման աջակցության վրա,

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը և Ռումինիայի Հարգիտանահանգը**

Սույնով արտահայտում են մտադրություն համագործակցելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հետեւյալ ոլորտներում. կառավարում, տնտեսություն, ներդրումներ, տարածքային զարգացում, գյուղական զարգացում, կրթություն, մշակույթ, զբոսաշրջություն, սոցիալական աջակցություն, սպորտ, շրջակա միջավայրի պաշտպանություն եւ այլն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության եւ Ռումինիայի ազգային օրենսդրությունների:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը եւ Ռումինիաի Հարգիտա նահանգը իրենց իրավասությունների շրջանակներում կնպաստեն ինչպես կազմակերպությունների եւ հաստատությունների միջեւ համագործակցության զարգացմանը, այնպես էլ իրենց վարչատարածքային միավորների գիտության, մշակույթի, առողջապահության, կրթության, սոցիալական աջակցության եւ պաշտպանության, սպորտի, զբոսաշրջության, շրջակա միջավայրի պաշտպանության, տնտեսության զարգացման եւ ներդրումների եւ կոմունալ ոլորտների զարգացմանը:

Սույն փաստաթղթով մենք հաստատում ենք մեր համագործակցելու մտադրությունը ի շահ երկու վարչատարածքային միավորների համայնքների՝ հիմնվելով փոխադարձության սկզբունքի, երկկողմ համագործակցության և ընդհանուր հետաքրքրությունների վրա:

Հայաստանի
Հանրապետության
Լոռու մարզի
ՀԱՄԱՐ

ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Մարզպետ

Ռումինիայի
Հարգիտա նահանգի
ՀԱՄԱՐ

ԲՈՐԲՈՅ ՉԱԲԱ
Նահանգապետ

**Հարգիտա նահանգ, սեպտեմբերի 2017թ.**

# INTENȚIE DE COOPERARE ÎNTRE JUDEȚUL HARGHITA DIN ROMÂNIA ȘI REGIUNEA LORI DIN REPUBLICA ARMENIA

Dorind să contribuie la dezvoltarea şi consolidarea relațiilor de colaborare bilaterale și a relațiilor de prietenie, ca și de dezvoltarea de noi dimensiuni ale cooperării bilaterale în domeniul administrației publice locale și teritoriale, bazate pe respect şi sprijin reciproc în soluționarea unor probleme de interes comun,

**Județul Harghita din România și Regiunea Lori din Republica Armenia**

exprimă intenția de colaborare în următoarele domenii de interes comun: administrație, dezvoltare socio-economică, investiții, dezvoltare teritorială și rurală, educație, culturală, turism, sport, protecția mediului și în alte domenii de interes comun, în baza legislațiilor în vigoare din Armenia și România.

În conformitate cu competențele specifice, județul Harghita din România și Regiunea Lori din Republica Armenia vor contribui la dezvoltarea cooperării între organizațiile și instituțiile de știință, cultură, sănătate, educație, asistență și protecție socială, sport, turism, mediu, dezvoltare economică și de investiții, din unitățile lor administrativ-teritoriale.

Prin semnarea prezentei, confirmăm intenția noastră de colaborare în beneficiul intereselor comunităților din cele două unități administrativ teritoriale în baza principiului reciprocității, a cooperării bilaterale și al intereselor comune.

În numele
Județul Harghita, România
Borboly Csaba
Președinte

În numele
Regiunea Lori, Republica Armenia
Artur Nalbandyan
Guvernator

Gheorgheni, 10 septembrie 2017